ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի որոշում

Վարչական գործ թիվ **ՎԴ/0488/05/21**
2025թ.

Վարչական գործ թիվ ՎԴ/0488/05/21

Նախագահող դատավոր՝ Կ. Գևորգյան

Դատավորներ՝ Ա. Հարությունյան

Է. Նահապետյան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

նախագահող Հ. ԲԵԴԵՎՅԱՆ
զեկուցող Ա. ԹՈՎՄԱՍՅԱՆ
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
Ք. ՄԿՈՅԱՆ

2025 թվականի մարտի 20-ին

գրավոր ընթացակարգով քննելով Լիլիթ Խաչատրյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 09.02.2024 թվականի որոշման դեմ՝ վարչական գործով ըստ հայցի Լիլիթ Խաչատրյանի ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության (այսուհետ՝ Գործակալություն), երրորդ անձ՝ Արամ Պետրոսյան՝ Գործակալության գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Լիլիթ Խաչատրյանը պահանջել է Գործակալության կողմից կատարված գործողությունները ճանաչել ոչ իրավաչափ:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Հ. Այվազյան) (այսուհետ՝ Դատարան) 28.10.2021 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 09.02.2024 թվականի որոշմամբ Գործալակության վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ Դատարանի 28.10.2021 թվականի վճիռն ամբողջությամբ բեկանվել և վարչական գործի վարույթն ամբողջովին կարճվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Լիլիթ Խաչատրյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

<u>2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.</u>

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 146-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի «գ» և «դ» ենթակետերը, ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Գործակալությունն իր բնույթով վարչարարություն հանդիսացող գործունեություն է իրականացրել, այսինքն՝ իր առարկայական իրավասության տիրույթում իրականացվող գործադիր-կարգադրիչ գործունեության ընթացքում իրացրել է իր հանրային իշխանական լիազորությունը՝ դրանով իսկ բողոքաբերի համար առաջացնելով փաստական և իրավական հետևանքներ: Ավելին՝ Գործակալության իրականացրած գործողությունները վարչարարություն չդիտարկելու Վերաքննիչ դատարանի պնդումը հանգեցնում է ողջամիտ հարցադրման, որը նույնպես էական նշանակություն ունի սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու համար: Այսպիսով, եթե Գործակալության գործողությունները չեն հանդիսանում վարչարարություն և փաստական հետևանքներ են առաջացնում մյուս ծնողի և երեխայի համար, ապա ի՞նչ կառուցակարգ է առկա Գործակալության գործողությունների իրավաչափության ստուգման համար և ինչպե՞ս պետք է իրացվի ՀՀ Սահմանադրության 50-րդ հոդվածով նախատեսված պատշաճ վարչարարության իրավունքը, քանի որ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են ՀՀ Սահմանադրությամբ կամ օրենքներով:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանի որոշումը չի համապատասխանում պատճառաբանված դատական ակտի չափանիշներին, քանի որ նշված որոշման մեջ ուղղակի վկայակոչվել են ՀՀ վճռաբեկ դատարանի ուղենիշային որոշումները և անցում է կատարվել եզրահանգմանը, այնինչ՝ որոշման մեջ բացակայում է նման եզրահանգման գալու պատճառաբանությունը, այսինքն՝ բացակայում է ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշումներում ամրագրված իրավական նախապայմանների և սույն գործի փաստերի համադրությունը (համանմանությունը): Այլ կերպ ասած՝ եթե Վերաքննիչ դատարանը փորձեր համադրել ՀՀ վճռաբեկ դատարանի վերլուծությունները սույն գործերի փաստերի

հետ (բողոքաբերի օրինակով), ապա կհամոզվեր, որ Գործակալությունն իր բնույթով վարչարարություն հանդիսացող գործունեություն է իրականացրել: Այսպիսով, Վերաքննիչ դատարանը խախտել է նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 146-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի «գ» և «դ» ենթակետերը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է ամբողջությամբ բեկանել Վերաքննիչ դատարանի 09.02.2024 թվականին կայացրած որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 28.10.2021 թվականի վճռին:

<u>3. Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) ՀՀ արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման բաժնի 28.02.2014 թվականի թիվ ԱԲ 111885 ամուսնության վկայականի համաձայն՝ Արամ Պետրոսյանի և Լիլիթ Խաչատրյանի ամուսնության պետական գրանցումը կատարվել է 28.02.2014 թվականին **(հատոր 1-ին, գ.թ. 29)**:

2) ՀՀ արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման բաժնի 27.05.2014 թվականի թիվ ԱԲ 326666 ծննդյան վկայականի համաձայն՝ Գևորգ Պետրոսյանի ծննդյան փաստի գրանցումը կատարվել է 23.05.2014 թվականին, ծնողները՝ հայրը՝ Արամ Պետրոսյան, մայրը՝ Լիլիթ Խաչատրյան **(հատոր 1-ին, գ.թ. 30)**:

3) ՀՀ ազգային անվտանգության ծառայության 17.12.2019 թվականի թիվ 2/6/3-1361 գրությամբ փաստաբան Աշխեն Դաշյանին հայտնվել է, որ «(...) 13.12.2019 թվականից մինչ օրս ընկած ժամանակահատվածում սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգում առկա տվյալների համաձայն՝ Գևորգ Արամի Պետրոսյանը (ծնված 23.05.2014 թվականին) 14.12.2019 թվականին Երևան-Բեյրութ 276 չվերթով մեկնել է Լիբանան» **(վարույթի նյութեր, հատոր 4-րդ, թ. 54)**:

4) Գործակալության պետին հասցեագրված 17.02.2020 թվականի դիմումով Արամ Պետրոսյանը խնդրել է «(...) ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Կոնվենցիայի շրջանակներում իր դիմումը քննարկելու և ԱՄՆ իրավասու մարմիններին դիմելու համար» **(հատոր 1-ին, գ.թ. 24)**:

5) ԱՄՆ պետդեպարտամենտի երեխաների հարցերի գրասենյակին հասցեագրված 17.02.2020 թվականի թիվ 26.2/3442-2020 գրությամբ Գործակալության պետը տեղեկացրել է, որ «(...) Հայաստանի Հանրապետության կենտրոնական մարմինն ստացել է Հայկ Հարությունյանի՝ «Երեխայի միջազգային առևանգման քաղաքացիական մոտեցումների մասին» 25.10.1980 թվականի կոնվենցիայի շրջանակներում ներկայացված դիմումը՝ իր զավակ Գևորգ Պետրոսյանին (ծնված 23.05.2014 թվականին) Հայաստանի Հանրապետություն վերադարձնելու վերաբերյալ:

Դիմումատուից ստացված տեղեկությունների համաձայն՝ նրա կինը (...) Լիլիթ Խաչատրյանը կարողացել է հավաքել իր ուղեբեռը, հեռանալ տանից երեխայի հետ և մեկնել Լիբանան: Տեղեկանալով իր կնոջ՝ նախապես պլանավորված քայլերի մասին՝ նա իր որդուն Հայաստան վերադարձնելու խնդրանքով դիմել է Լիբանանի իշխանություններին, որտեղից երեխայի ելքն արգելվել է:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Լիլիթ Խաչատրյանի ծնողները բնակվում են Ամերիկայի Միացյալ Նահանգներում, մեծ էր հավանականությունը, որ նա իր երեխայի հետ կմեկնի Միացյալ Նահանգներ, ինչն էլ տեղի է ունեցել: Լիբանանի իրավապահ մարմինները փակել են սահմանները, և Լիլիթը երեխայի հետ միայն կարող էր վերադառնալ Հայաստան: Լիլիթ Խաչատրյանը Հայաստանի փոխարեն մեկնում է Միացյալ Նահանգներ՝ Լիբանանի մարմիններին տալով կեղծ տեղեկություն, մասնավորապես այն մասին, որ նա պատրաստվում է վերադառնալ Հայաստան, քանի որ երեխան հետ էր մնացել դասերից:

Դիմումատուն, ցանկանալով փրկել իր ընտանիքը, դիմել է Հայաստանի Հանրապետությունում իր բնակության վայրի դատարան՝ խնդրելով երեխայի խնամակալությունը հանձնել իրեն: Վերջինս չի ներկայացրել ամուսնալուծության մասին դիմում: Արամ Պետրոսյանը երեխային տեսել է միայն Լիբանան ժամանելիս, կարճ ժամանակով: Այժմ, Լիլիթ Խաչատրյանն ԱՄՆ-ից կապ չի հաստատում նրա հետ: Նա որևէ տեղեկություն չունի երեխայի մասին:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ խնդրում ենք ձեզ դիտարկել «Երեխայի միջազգային առևանգման քաղաքացիական մոտեցումների մասին» 25.10.1980 թվականի կոնվենցիայի համաձայն երեխային Հայաստանի Հանրապետություն վերադարձնելու հարցը (...)» **(վարույթի նյութեր, հատոր 2-րդ, թ. 80-81)**:

6) ԱՄՆ պետդեպարտամենտի երեխաների հարցերի գրասենյակի 19.02.2020 թվականի գրությամբ հաստատվել է Արամ Պետրոսյանի անունից «Երեխայի միջազգային առևանգման քաղաքացիական մոտեցումների մասին» Հաագայի կոնվենցիայի համաձայն ներկայացված՝ երեխայի վերադարձի մասին դիմումի ստացումը **(վարույթի նյութեր, հատոր 3-րդ, գ.թ. 85)**:

7) Գործակալության պետի 08.04.2021 թվականի թիվ 26.2/8651 գրությամբ հայտնվել է, որ «(...) ԱՄՆ Կալիֆոռնիա նահանգի դատարանի որոշմամբ երեխան վերադարձվել է իր սովորական բնակության վայր՝ Հայաստանի Հանրապետություն: Նշված փաստի հիման վրա «Երեխայի միջազգային առևանգման քաղաքացիական մոտեցումների մասին» Հաագայի կոնվենցիայի շրջանակներում գործի քննարկումը համարվում է ավարտված (...)» **(հատոր 1-ին, գ.թ. 80)**:

8) Գործակալության պետի 10.06.2021 թվականի թիվ 26.2/16451-2021 գրությամբ հայտնվել է, որ «(...) «Երեխայի միջազգային առևանգման քաղաքացիական մոտեցումների մասին» Հաագայի կոնվենցիայի շրջանակներում քննվող գործը փակվել է ԱՄՆ կենտրոնական մարմնի կողմից՝ ԱՄՆ համապատասխան դատարանի՝ երեխային Հայաստանի Հանրապետություն վերադարձնելու որոշմամբ: Ներկա պահին երեխան գտնվում է Հայաստանի Հանրապետությունում» **(հատոր 1-ին, գ. թ. 109)**:

9) ԱՄՆ Կալիֆոռնիա նահանգի Լոս Անջելես շրջանի գերագույն դատարանի՝ Արամ Պետրոսյանն ընդդեմ Լիլիթ Խաչատրյանի թիվ 20STHC00006 գործով անչափահաս երեխային իր բնակության երկիր վերադարձնելու վերաբերյալ 26.02.2021 թվականի վճռի համաձայն՝ նույն դատարանը, «Երեխայի միջազգային առևանգման քաղաքացիական մոտեցումների մասին» 1980 թվականի կոնվենցիայի և «Երեխայի առևանգման միջազգային միջոցների մասին» օրենքի, 22 U.SC. բաժին 9001 և հետագա բաժինների համաձայն, վճռել է, որ անչափահաս երեխան՝ Գևորգ Պետրոսյանը վերադարձվի Հայաստանի

Հանրապետություն՝ իր հարազատ բնակության երկիր, անչափահասի հոր քույրերի ուղեկցությամբ **(հատոր 2-րդ, գ.թ. 39-41)**:

10) ԱՄՆ Կալիֆոռնիա նահանգի Լոս Անջելես շրջանի գերագույն դատարանի՝ Արամ Պետրոսյանն ընդդեմ Լիլիթ Խաչատրյանի թիվ 20STHC00006 գործով 01.03.2021 թվականի անչափահաս երեխային իր բնակության երկիր վերադարձնելու վերաբերյալ դիմումի փաստերի հայտնաբերման և օրենքի եզրակացությունների համաձայն՝ նույն դատարանից պահանջվող գործողությունն է հանձնարարել Գևորգ Պետրոսյանի՝ Հայաստանի Հանրապետություն անհապաղ վերադարձը, որն էլ կատարվել է դատարանի կողմից **(հատոր 2-րդ, գ.թ. 45-56)**:

<u>4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, քանի որ Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածների, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտման արդյունքում թույլ է տրվել դատական սխալ, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, և որը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով.

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ վարչական մարմնի՝ վարչական կամ նորմատիվ ակտի ընդունմանը չուղղված գործունեության (ռեալ ակտի ընդունում) առանձնահատկություններին՝ միաժամանակ պատասխանելով այն իրավական հարցադրմանը, թե արդյո՞ք «Երեխայի միջազգային առևանգման քաղաքացիական մոտեցումների մասին» 25.10.1980 թվականի կոնվենցիայի շրջանակներում կենտրոնական մարմնի՝ անձի դիմումը քննարկելու և այլ պետության իրավասու մարմիններին դիմելու գործունեությունը հանդիսանում է վարչարարության իրականացում, և արդյո՞ք դրա իրավաչափությունը ենթակա է սպուգման վարչադատավարական կարգով:

ՀՀ Սահմանադրության՝ «Պատշաճ վարչարարության իրավունքը» վերտառությամբ 50-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի վարչական մարմինների կողմից իրեն առնչվող գործերի անաչառ, արդարացի և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 13-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, ում նույն կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ա» ենթակետի իմաստով վարչական մարմիններ են Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության հանրապետական մարմինները՝ Հայաստանի Հանրապետության նախարարությունները, ինչպես նաև Հանրապետության ողջ տարածքում վարչարարություն իրականացնող պետական այլ մարմինները:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի իմաստով վարչարարությունը վարչական մարմինների արտաքին ներգործություն ունեցող այն գործունեությունն է, որը եզրափակվում է վարչական կամ նորմատիվ ակտերի ընդունմամբ, ինչպես նաև գործողությունը կամ անգործությունն, որն անձանց համար առաջացնում է փաստական հետևանքներ:

Նախկինում կայացված որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ «*(…) վարչական մարմինների հիմնական գործառութային նպատակը Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված պատվիրանների կատարումն է՝ իրավական պետության սկզբունքներին և կանոններին համապատասխան:*

Վարչական մարմինների հետ հարաբերություններում ֆիզիկական ու իրավաբանական անձանց՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության պատշաճ երաշխիք ապահովելու նպատակով ՀՀ Ազգային ժողովի կողմից 18.02.2004 թվականին ընդունվել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը, որի 1-ին հոդվածում ամրագրվել է, որ նույն օրենքը սահմանում է վարչարարության հիմունքները, կարգավորում է վարչական ակտեր ընդունելու, վարչական ակտերը, վարչական մարմինների գործողությունները և անգործությունը բողոքարկելու, վարչական ակտի կատարման, վարչական ծախսերի, ինչպես նաև վարչարարությամբ հասցված վնասի հատուցման հետ կապված՝ վարչական մարմինների և ֆիզիկական կամ իրավաբանական անձանց միջև ծագած հարաբերությունները:

Վարչարարության հիմնարար սկզբունքները, որոնք իրենց ամրագրում են ստացել վերոգրյալ օրենքի 2-րդ գլխում, վարչական իրավունքի ոլորտում որոշակիացնում են սահմանադրական սկզբունքները՝ հանդիսանալով վարչարարության նորմատիվ ուղենիշեր:

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վարչարարության հիմնարար սկզբունքները վարչական իրավունքի առանցքային հիմնադրույթներն են, որոնք, ընդհանուր առմամբ, ուղղորդում են վարչական մարմինների ցանկացած գործունեություն: ՀՀ վճռաբեկ դատարանի գնահատմամբ վարչարարության հիմնարար սկզբունքների կարգավորիչ դերը կայանում է նրանում, որ վարչական մարմինների կողմից իրականացվող վարչարարությունը պետք է համապատասխանի նշված սկզբունքներին:

(…) ՀՀ վճռաբեկ դատարանը հարկ է համարել հատուկ ընդգծել, որ օրինականության սահմանադրական սկզբունքն ուղղակիորեն պահանջում է, որպեսզի գործադիր իշխանության մարմինների գործունեությունը հիմնված լինի Սահմանադրության և օրենքի վրա: Օրենքի գերակայությունը նշանակում է, որ որևէ վարչարարություն չի կարող հակասել օրենքին կամ օրենքի ուժով վարչական մարմնի համար պարտադիր այլ իրավական ակտերին: Օրենքը գերակայում է վարչարարության հանդեպ, հետևաբար, ցանկացած վարչարարություն ենթարկվում, ստորադասվում է օրենքին թե՛ ըստ ձևի, թե՛ ըստ բովանդակության, հետևաբար ակներև է, որ վարչարարությունը եզրափակող իրավական ակտերը (նորմատիվ և վարչական) կամ ռեալ ակտերը (գործողությունները և անգործությունը)

նույնպես պետք է համապատասխանեն օրենքին: Դրանք պետք է ընդունվեն կամ ձեռնարկվեն օրենքով սահմանված կարգով:

Ամբողջ վերոգրյալից հետևում է, որ վարչական մարմինների կողմից իրականացվող ցանկացած գործողություն պետք է համապատասխանի Սահմանադրությանն ու օրենքներին (…)»:

Նույն որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ *«(…) վարչարարությունը բնորոշվում է որպես վարչական մարմինների արտաքին ներգործություն ունեցող գործունեություն, որը եզրափակվում է վարչական կամ նորմատիվ ակտերի ընդունմամբ, ինչպես նաև գործողություն կամ անգործություն, որն անձանց համար առաջացնում է փաստական հետևանքներ(…)*

(…) իրավական պետությունում, ինչպիսին է Հայաստանի Հանրապետությունը, վարչական մարմինների կողմից իրականացվող արտաքին ներգործություն ունեցող ոչ մի գործողություն չի կարող հակասել օրենսդրությանը: Ընդ որում, նշված պահանջը վերաբերում է ինչպես նյութաիրավական, այնպես էլ ընթացակարգային իրավանորմերին, քանի որ վարչական մարմինների գործունեության իրավաչափության միակ չափանիշը նյութական իրավունքը չէ և վարչական մարմնի գործունեությունը պետք է համապատասխանի նաև օրենսդրի կողմից սահմանված ընթացակարգային պահանջներին (…)» (տե՛ս, Գոհար Հակոբյանի ընդդեմ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի թիվ ՎԴ/8932/05/18 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 10.05.2022 թվականի որոշումը):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «(…) *վարչական մարմնի արտաքին ներգործություն ունեցող որևէ գործունեություն բնավ ինքնանպատակ չէ և պետք է հետապնդի նպատակներ, որոնց հասնելով էլ՝ այդ գործունեությունը պետք է եզրափակվի: Վարչական մարմինը չի կարող գործունեություն ծավալել լոկ գործելու պատրանք առաջացնելու համար: Դա էական չափով հարկատուների միջոցների հաշվին գոյացող պետական բյուջեի միջոցների վատնում կլինի:*

ՀՀ վճռաբեկ դատարանի գնահատմամբ վարչական մարմինների արտաքին ներգործությանն ուղղված գործունեությունը պետք է իր տրամաբանական ավարտին հասնի, արտահայտվելով որոշակի վարչական (իրավական) ակտի կամ փաստացի ներգործության տեսքով: Այդ գործունեությունը, ըստ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի, եզրափակվում է վարչական կամ նորմատիվ ակտի ընդունմամբ, ինչպես նաև գործողությամբ կամ անգործությամբ, որն անձանց համար առաջացնում է փաստական հետևանքներ: Այլ կերպ ասած վարչարարության արդյունքը վրա է հասնում հետևյալ եղանակներով.

- վարչական կամ նորմատիվ ակտի ընդունում,

- ռեալ ակտի ընդունում (գործողության կամ անգործության կատարում)» (տե՛ս, «Էյ Քեյ Էյ Ջի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Արբեն Ղույյանն ընդդեմ ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի թիվ ՎԴ/11082/05/20 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.12.2021 թվականի որոշումը):

ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ «*(…) վարչարարությունը բնորոշվում է հանրային իրավունքի բնագավառին առնչվելու հանգամանքով: Դա պետք է լինի վարչական մարմնի հանրային իրավունքի բնագավառում որոշակի հարցի լուծմանն ուղղված գործողություն, իսկ հանրային իրավունքի բնագավառը նշանակում է անձի հարաբերություններ պետության հետ,*

որը հանդես է գալիս որպես հանրային իշխանության կրող (…)» (տե՛ս, ՀՀ գլխավոր դատախազությունն ընդդեմ Հայկ Մարգարյանի թիվ ԵԱՔԴ/1369/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2010 թվականի որոշումը):

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած մեկ այլ որոշմամբ փաստել է, որ «*(…) ինչպես ցանկացած հարաբերություն, այնպես էլ իրավական նորմերի միջոցով կարգավորվող հասարակական հարաբերությունը՝ իրավահարաբերությունը, որոշակի փոխկապակցված տարրերի (սուբյեկտ, օբյեկտ և բովանդակություն) ամբողջություն (համակարգ) է, որոնց բովանդակային-որակական տարբերությունը հնարավորություն է տալիս իրավահարաբերությունները տարանջատելու միմյանցից: Մասնավորապես՝ հանրային իրավահարաբերությունը մասնավոր հարաբերությունից տարանջատվում է թե՛ սուբյեկտային կազմով, թե՛ բովանդակությամբ և թե՛ օբյեկտով: Այդ տարրերն առանձին-առանձին անհրաժեշտ են, իսկ իրենց համակցության մեջ բավարար են, որպեսզի փաստվի իրավահարաբերության հանրային լինելու հանգամանքը:*

Իրավահարաբերությունը հանրային հատկանիշով բնութագրելու համար նախևառաջ անհրաժեշտ է, որ հարաբերության կողմ հանդես գա հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը (վարչական մարմիններ, դրանց պաշտոնատար անձինք, այդ թվում՝ պետական և համայնքային ծառայողներ): Մինչդեռ հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտի՝ իրավահարաբերության կողմ լինելը դեռևս չի նշանակում, որ իրավահարաբերությունը հանրային բնույթի է, քանի որ հանրային բնույթը՝ որպես իրավահարաբերության բնութագրիչ, ծավալային առումով ներառում է իրավահարաբերության թե՛ սուբյեկտային կազմը, թե՛ օբյեկտը, թե՛ բովանդակությունը և ի հայտ է գալիս միայն վերոնշյալ երեք տարրերի համակցությամբ (…):

(…) հանրային է այն իրավահարաբերությունը, որում կողմերից մեկի դերում անպայմանորեն հանդես է գալիս հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը, որն այդ հարաբերության ընթացքում հանրային շահի իրացման կապակցությամբ իրացնում է օրենքով սահմանված իր հանրային իշխանական լիազորությունները»: *(տե՛ս, «Վեստ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության, երրորդ անձ «ՄաքԴոնալդս Քորփորեյշն» ընկերության թիվ ՎԴ/0830/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.04.2016 թվականի որոշումը):*

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ «*(…) վարչարարությունն իրականացնելիս վարչական մարմինները պարտավոր են գործել ֆիզիկական կամ իրավաբանական անձանց՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով կամ այլ իրավական ակտերով ամրագրված (…) իրավունքների ու ազատությունների իրականացման համար խոչընդոտներ չհարուցելու, դրանց իրականացման համար Սահմանադրության, միջազգային պայմանագրի, օրենքի կամ այլ իրավական ակտի ուժով անհրաժեշտ պայմաններ ապահովելու և նրանց վրա ոչ իրավաչափորեն որևէ պարտականություն չդնելու հաշվառմամբ (…)» (տե՛ս, Նարինե Չարչյանը, Վահե և Աննա Տեր-Եսայաններն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/11139/05/18 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 10.09.2021 թվականի որոշումը)*:

Վերահաստատելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները, Վճռաբեկ դատարանն ամրագրում է, որ, անկախ վարչարարության եզրափակման ձևից՝ նորմատիվ, վարչական կամ ռեալ ակտի ընդունմամբ, ցանկացած տեսակի վարչարարություն ունի արտաքին ներգործության պարտադիր հատկանիշ: Այլ կերպ ասած, անկախ այն հանգամանքից, թե վարչական մարմնի գործողություններն ուղղված են նորմատիվ կամ վարչական ակտի ընդունմանը, թե ինքնին անձանց համար առաջացնում են փաստական հետևանքներ, դրանք հանդիսանում են վարչարարություն, եթե, ի թիվս այլնի, օժտված են «արտաքին ներգործություն» պարտադիր հատկանիշով:

Բացի վերոգրյալից, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ցանկացած տեսակի վարչարարության պարտադիր հատկանիշ է հանդիսանում նաև անձանց համար փաստական հետևանքներ առաջացնելը:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ռեալ ակտի ընդունմամբ եզրափակվող վարչարարության արտաքին ներգործությունը կարող է հանգեցնել հետևյալ փաստական հետևանքներին՝

- վարչական մարմնի գործողությունը կամ անգործությունը բարելավում է անձի փաստացի դրությունը,

- վարչական մարմնի գործողությունը կամ անգործությունը վատթարացնում է անձի փաստացի դրությունը:

Ելներով վերոգրյալից և անդրադառնալով վարչական մարմինների՝ վարչական ակտի ընդունմանը չուղղված գործունեության առանձնահատկություններին, Վճռաբեկ դատարանն ամրագրում է, որ ***վարչական մարմնի գործողությունը կամ անգործությունը հանդիսանում է նորմատիվ կամ վարչական ակտ ընդունելուն չուղղված վարչարարություն, եթե միաժամանակ առկա են հետևյալ բոլոր պայմանները.***

1) ռեալ ակտ ընդունելուն ուղղված վարչական մարմինների գործունեությունը՝

- պետք է հիմնված լինի Սահմանադրության և օրենքի (նյութաիրավական ու ընթացակարգային) վրա,

- պետք է իրականացվի հանրային իրավունքի բնագավառում,

- պետք է հետապնդի օրենքով սահմանված նպատակներ, որոնց հասնելով վարչարարությունը պետք է եզրափակվի,

2) ռեալ ակտ կայացնելուն ուղղված վարչական մարմինների գործունեության արդյունքում կատարվող գործողությունը կամ դրսևորվող անգործությունը՝

- պետք է ունենա արտաքին ներգործության պարտադիր հատկանիշ,

- անձի համար պետք է առաջացնի փաստական հետևանքներ՝ բարելավի կամ վատթարացնի անձի փաստացի դրությունը:

ՀՀ Ազգային ժողովի 23.10.2006 թվականի «Երեխայի միջազգային առևանգման քաղաքացիական մոտեցումների մասին կոնվենցիան (կից վերապահումներով) վավերացնելու մասին» թիվ Ն-305-3 որոշման համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ազգային ժողովը որոշում է վավերացնել 1980 թվականի հոկտեմբերի 25-ին Հաագա քաղաքում ստորագրված «Երեխայի միջազգային առևանգման քաղաքացիական մոտեցումների մասին» կոնվենցիան (կից վերապահումներով):

«Երեխայի միջազգային առևանգման քաղաքացիական մոտեցումների մասին» 25.10.1980 թվականի կոնվենցիայի (այսուհետ նաև՝ Հաագայի կոնվենցիա) 1-ին հոդվածի համաձայն՝ նույն կոնվենցիայի նպատակներն են ապահովել որևէ պայմանավորվող պետություն անօրինականորեն տեղափոխված կամ այնտեղ պահվող երեխաների անհապաղ վերադարձը, և երաշխավորել մի պայմանավորվող պետության օրենսդրությամբ նախատեսված՝ խնամակալության և տեսակցության իրավունքների արդյունավետ հարգումը այլ պայմանավորվող պետություններում:

Հաագայի կոնվենցիայի 2-րդ հոդվածի համաձայն՝ պայմանավորվող պետությունները ձեռնարկում են բոլոր համապատասխան միջոցները իրենց տարածքներում Կոնվենցիայի նպատակների կատարումն ապահովելու համար: Այդ նպատակով նրանք օգտագործում են իրենց տրամադրության տակ գտնվող ամենաարագ ընթացակարգերը:

Հաագայի կոնվենցիայի 3-րդ հոդվածի համաձայն՝ երեխայի տեղափոխումը կամ պահելը անօրինական է դիտվում, եթե դրանով խախտվում են խնամակալության իրավունքները, որոնք միասնական կամ անհատական կերպով շնորհված են որևէ անձի, հաստատության կամ այլ մարմնի՝ այն պետության օրենսդրության համաձայն, որտեղ երեխան սովորաբար բնակվել է տեղափոխվելուց կամ պահվելուց անմիջապես առաջ, և տեղափոխման կամ պահելու պահին միասնական կամ անհատական կերպով այդ իրավունքներն արդյունավետորեն իրականացվել են կամ կիրականացվեին, եթե չլիներ տեղափոխումը կամ պահելը (…) խնամակալության իրավունքները կարող են առաջանալ, մասնավորապես, օրենքի ուժով կամ դատական կամ վարչական որոշման կամ տվյալ պետության օրենսդրությանը համապատասխան իրավական ուժ ունեցող համաձայնության արդյունքում:

Հաագայի կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ պայմանավորվող պետությունները նշանակում են կենտրոնական մարմին՝ նույն կոնվենցիայով նման իրավասու մարմինների վրա դրված պարտականությունները կատարելու համար:

Հաագայի կոնվենցիայի 7-րդ հոդվածի համաձայն՝ կենտրոնական մարմինները համագործակցում են միմյանց հետ և օժանդակում են իրենց պետությունների իրավասու մարմինների միջև համագործակցությանը՝ երեխաների անհապաղ վերադարձն ապահովելու և կոնվենցիայի այլ նպատակներին հասնելու համար: Մասնավորապես, անմիջականորեն կամ որևէ միջնորդի միջոցով նրանք ձեռնարկում են բոլոր համապատասխան միջոցները, որպեսզի՝ բացահայտեն, թե որտեղ է գտնվում անօրինականորեն տեղափոխված կամ պահվող երեխան. կանխարգելեն երեխային հետագա վնաս պատճառելը կամ շահագրգիռ անձանց վնասելը՝ ժամանակավոր միջոցներ ձեռնարկելով կամ կարգադրելով ձեռնարկել. ապահովեն երեխայի կամավոր վերադարձը կամ նախաձեռնեն խնդիրների բարեկամական լուծումը. անհրաժեշտության դեպքում տեղեկատվություն փոխանակեն երեխայի սոցիալական ծագման մասին. տրամադրեն ընդհանուր բնույթի տեղեկատվություն կոնվենցիայի կիրառմանն առնչվող՝ իրենց պետությունների իրավունքի մասին. նախաձեռնեն դատական կամ վարչական ընթացակարգեր կամ նպաստեն այդպիսի ընթացակարգերին՝ երեխայի վերադարձմանը հասնելու նպատակով և, անհրաժեշտության դեպքում, համաձայնության գան տեսակցության իրավունքի արդյունավետ իրականացումը կազմակերպելու և ապահովելու համար. եթե հանգամանքները պահանջում են, ապահովեն կամ դյուրացնեն իրավաբանական օգնության և խորհրդատվության տրամադրումը, ներառյալ փաստաբանների և իրավաբանական խորհրդատուների մասնակցությունը.

ապահովեն այնպիսի կազմակերպչական օգնություն, որը կարող է անհրաժեշտ և տեղին լինել երեխայի անվտանգ վերադարձն ապահովելու համար. տեղյակ պահեն միմյանց սույն կոնվենցիայի կատարման մասին և հնարավորին չափով վերացնեն դրա կիրառման խոչընդոտները:

Հաագայի կոնվենցիայի 8-րդ հոդվածի համաձայն՝ ցանկացած անձ, հաստատություն կամ այլ մարմին, որը բողոք է ներկայացրել այն մասին, որ երեխան տեղափոխվել կամ պահվել է՝ ի խախտումն խնամակալության իրավունքների, կարող է դիմել երեխայի մշտական բնակության կամ ցանկացած այլ պայմանավորվող պետության կենտրոնական մարմնի՝ երեխայի վերադարձն ապահովելուն աջակցելու համար:

Հաագայի կոնվենցիայի 9-րդ հոդվածի համաձայն՝ եթե 8-րդ հոդվածով նախատեսված դիմումն ստացած կենտրոնական մարմինը հիմքեր ունի հավատալու, որ երեխան գտնվում է այլ պայմանավորվող պետությունում, ապա նա անմիջականորեն և առանց ձգձգումների դիմումը փոխանցում է տվյալ պայմանավորվող պետության կենտրոնական մարմնին և այդ մասին տեղեկացնում է հայցող կենտրոնական մարմնին կամ դիմողին՝ կախված հանգամանքներից:

Հաագայի կոնվենցիայի 10-րդ հոդվածի համաձայն՝ այն պետության կենտրոնական մարմինը, որտեղ գտնվում է երեխան, երեխային կամավոր վերադարձնելու համար ձեռնարկում է բոլոր համապատասխան միջոցները կամ կարգադրում է դրանք ձեռնարկել:

Հայաստանի Հանրապետությունը՝ որպես Հաագայի կոնվենցիան վավերացրած պայմանավորվող պետություն, նույն կոնվենցիայով սահմանված կարգով պարտավոր է կատարել այն բոլոր գործողությունները, որոնք անհրաժեշտ են կոնվենցիայի պահանջների կատարման համար, այն է՝ ապահովել որևէ պայմանավորվող պետություն անօրինականորեն տեղափոխված կամ այնտեղ պահվող երեխաների անհապաղ վերադարձը և երաշխավորել մի պայմանավորվող պետության օրենսդրությամբ նախատեսված խնամակալության և տեսակցության իրավունքների արդյունավետ հարգումը այլ պայմանավորվող պետություններում:

Հաագայի կոնվենցիայի հրամայական պահանջով պայմանավորվող պետությունները նշանակում են կենտրոնական մարմին՝ նույն կոնվենցիայով նման իրավասու մարմինների վրա դրված պարտականությունները կատարելու և երեխաների անհապաղ վերադարձն ապահովելու համար:

Հաագայի կոնվենցիայով ամրագրված գործընթացը ենթադրում է, որ երեխայի սովորաբար բնակվելու պետության օրենսդրությամբ խնամակալության իրավունքներ ունեցող որևէ անձ, հաստատության կամ այլ մարմին իրավունք ունի խնամակալության իրավունքների խախտման դեպքում համապատասխան դիմում ներկայացնելու կենտրոնական մարմնին՝ ակնկալելով, որ վերջինիս կողմից իրականացվելիք գործողությունների հետևանքով կվերացվեն իր իրավունքների խախտումները:

Միաժամանակ, կենտրոնական մարմինը դիմումն ստանալուց հետո պետք է Հաագայի կոնվենցիայով սահմանված չափորոշիչների համաձայն գնահատի՝ արդյո՞ք երեխայի տեղափոխումը հանդիսանում է անօրինական, ինչպես նաև արդյո՞ք խնամակալության կամ տեսակցության իրավունքների խախտումից անմիջապես առաջ երեխան մշտապես բնակվել է որևէ պայմանավորվող պետությունում: Որից հետո, եթե հիմքեր ունի հավատալու, որ երեխան գտնվում է այլ պայմանավորվող պետությունում, ապա

կենտրոնական մարմինը անմիջականորեն և առանց ձգձգումների կատարում է դիմումը տվյալ պայմանավորվող պետության կենտրոնական մարմնին փոխանցելու և այդ մասին դիմողին տեղեկացնելու գործողություններ:

Արդյունքում, Հաագայի կոնվենցիայի պահանջների սահմաններում երեխայի մշտական բնակության պետության կենտրոնական մարմնի ու այն պետության կենտրոնական մարմնի կողմից կատարվող՝ միմյանցից ածանցվող գործողություններով լուծվում են խնամակալության իրավունքներ ունեցող անձի, հաստատության կամ այլ մարմնի իրավունքի խախտման գնահատման և, ըստ այդմ, խնամակալության իրավունքների խախտման վերացման և երեխայի՝ իր հիմնական բնակության պետության վերադարձման հարցերը:

ՀՀ կառավարության 20.08.2009 թվականի ««Երեխայի միջազգային առևանգման քաղաքացիական մոտեցումների մասին» կոնվենցիայով նախատեսված կենտրոնական մարմին նշանակելու մասին» թիվ 952-Ն որոշման 1-ին կետով Հաագայի կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված կենտրոնական մարմին է նշանակվել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը:

ՀՀ արդարադատության նախարարի, ՀՀ արտաքին գործերի նախարարի և ՀՀ ոստիկանության պետի 17.02.2008 թվականի ««Երեխայի միջազգային առևանգման քաղաքացիական մոտեցման մասին» Հաագայի 25.10.1980 թվականի կոնվենցիայով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների կատարման ապահովման մասին» համատեղ հրամանով հաստատվել է Հաագայի կոնվենցիայի կատարման ապահովման համար Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության իրավասու մարմինների գործակցության կարգը:

ՀՀ արդարադատության նախարարի 22.05.2017 թվականի թիվ 277-Ա հրամանով Գործակալությունը նշանակվել է որպես կենտրոնական մարմնի՝ Կոնվենցիայով նախատեսված լիազորությունների կատարման համար պատասխանատու ստորաբաժանում:

Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Հայաստանի Հանրապետությունում Հաագայի կոնվենցիայով սահմանված լիազորությունների իրականացման, այլ պայմանավորվող պետության կենտրոնական մարմինների հետ համագործակցության և նրանց կողմից կատարվող՝ միմյանցից ածանցվող գործողությունների իրականացման համար պատասխանատու կենտրոնական մարմինը ՀՀ արդարադատության նախարարությունն է՝ ի դեմս Գործակալության, որի կողմից կատարվող գործողություններով էլ լուծվում են խնամակալության իրավունքներ ունեցող անձի, հաստատության կամ այլ մարմնի իրավունքի խախտման գնահատման և, ըստ այդմ, խնամակալության իրավունքների խախտման վերացման և երեխայի՝ իր հիմնական բնակության պետության վերադարձման հարցերը:

Ելնելով վերոգրյալ վերլուծություններից՝ Վճռաբեկ դատարանն ամրագրում է, որ որևէ պայմանավորվող պետություն անօրինականորեն տեղափոխված կամ այնտեղ պահվող երեխաների անհապաղ վերադարձմանն ուղղված Գործակալության գործունեությունը՝ հիմնված է Հաագայի կոնվենցիայի, ՀՀ կառավարության 20.08.2009 թվականի թիվ 952-Ն որոշման ու ՀՀ արդարադատության նախարարի, ՀՀ արտաքին գործերի նախարարի և ՀՀ ոստիկանության պետի 17.02.2008 թվականի համատեղ հրամանի վրա, իրականացվում է հանրային իրավունքի բնագավառում՝ հանրային իշխանության կրող սուբյեկտի կողմից, հետապնդում է Հաագայի կոնվենցիայով սահմանված նպատակները, որոնց

հասնելով գործունեությունը եզրափակվում է: Միաժամանակ, նշված գործունեության արդյունքում կատարվող գործողությունները ուղղված են Գործակալության հետ ենթակայական հարաբերություններ չունեցող սուբյեկտների՝ անձի, հաստատության կամ այլ մարմնի խնամակալության իրավունքի պաշտպանությանը, ուստի ունեն արտաքին ներգործություն: Ինչպես նաև այդ գործողությունները թե դիմող սուբյեկտի, թե երեխային ենթադրաբար ապօրինի տեղափոխած անձի և թե երեխայի համար առաջացնում են փաստական հետևանքներ՝ բարելավելով կամ վատթարացնելով նրանց փաստացի դրությունը:

Ուստի, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ***Հաագայի կոնվենցիայի շրջանակներում կենտրոնական մարմնի՝ անձի դիմումը քննարկելու և այլ պետության իրավասու մարմիններին դիմելու գործունեությունը հանդիսանում է վարչարարության իրականացում, որը եզրափակվում է ռեալ ակտի ընդունմամբ***:

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք (...):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ սույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ՝

1) խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով կամ այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները, ներառյալ, եթե՝

ա. խոչընդոտներ են հարուցվել այդ իրավունքների և ազատությունների իրականացման համար,

բ. չեն ապահովվել անհրաժեշտ պայմաններ այդ իրավունքների իրականացման համար, սակայն դրանք պետք է ապահովվեին Սահմանադրության, միջազգային պայմանագրի, օրենքի կամ այլ իրավական ակտի ուժով.

2) նրա վրա ոչ իրավաչափորեն դրվել է որևէ պարտականություն.

3) նա վարչական կարգով ոչ իրավաչափորեն ենթարկվել է վարչական պատասխանատվության:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վկայակոչված իրավանորմերով յուրաքանչյուր անձի համար սահմանվում է իր իրավունքների պաշտպանության

համար վարչական դատարան դիմելու իրավունքը: Այսինքն՝ սկզբունքորեն ենթադրվում է, որ անձի իրավունքի խախտման հնարավորություն գոյություն ունի և իրավունքի ենթադրյալ խախտման դեպքում շահագրգիռ անձն իրավունք ունի դիմելու վարչական դատարան:

Թեև դատարանի մատչելիության իրավունքն ուղղակիորեն ամրագրված չէ Կոնվենցիայի 6-րդ հոդվածում, սակայն Մարդու իրավունքների եվրոպական դատարանն (այսուհետ՝ Եվրոպական դատարան) այն ճանաչել է որպես արդար դատաքննության իրավունքի անբաժանելի տարր: Այսպես, Եվրոպական դատարանի կողմից դատարանի մատչելիության իրավունքի վերաբերյալ ձևավորված կայուն նախադեպային իրավունքի համաձայն՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը երաշխավորում է անձի իրավունքներին և պարտականություններին առնչվող հայցով դատարան դիմելու իրավունքը: Այդ դրույթը մարմնավորում է դատարան դիմելու, այն է՝ դատարանում հայց հարուցելու իրավունքը, որը հնարավորություն է տալիս օգտվելու Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետում նախատեսված մյուս երաշխիքներից: Դատական վարույթի արդար, հրապարակային և արագ բնութագրիչները, անշուշտ, արժեք չեն ունենա, եթե այդ գործընթացներին ընթացք չի տրվում: Դժվար է պատկերացնել իրավունքի գերակայություն արդարադատություն իրականացնելիս, եթե դատարան դիմելու իրավունքը չի ապահովվում (*տե՛ս, Kreuz v. Poland (28249/95) գործով Եվրոպական դատարանի 19.06.2001 թվականի վճիռը, 52-րդ կետ*):

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացված որոշմամբ փաստել է, որ *«(…)Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում են մարդու դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնական իրավունքները, որոնց կարևոր բաղադրիչներից մեկը բողոքարկման իրավունքն է: Բողոքարկման ինստիտուտն իրավական միջոց է, որը հնարավորություն է տալիս որոշակի ընթացակարգի միջոցով գործնականում ապահովել դատական սխալների բացահայտումը և ուղղումը՝ դրանով իսկ նպաստելով արդարադատության նպատակների գործնականում իրականացմանը(…)»*(*տե՛ս, «ՄԻՏԱՐԻՈ ԳՈԼԴ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ընդդեմ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի թիվ ՎԴ/5753/05/19 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.05.2023 թվականի որոշումը*):

Այսպիսով վերոգրյալ իրավական դիրքորոշումների հաշվառմամբ՝ Վճռաբեկ դատարանը եզրակացնում է, որ Հաագայի կոնվենցիայի շրջանակներում կենտրոնական մարմնի՝ անձի դիմումը քննարկելու և այլ պետության իրավասու մարմիններին դիմելու գործունեության իրավաչափությունը ենթակա է ստուգման վարչադատավարական կարգով:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վարչական գործը հարուցվել է Լիլիթ Խաչատրյանի կողմից ներկայացված ճանաչման հայցի հիման վրա, որով վերջինս պահանջել է գործակալության գործողությունները ճանաչել ոչ իրավաչափ:

Դատարանը 28.10.2021 թվականի վճռով բավարարել է հայցը՝ պատճառաբանելով, որ *«(…) ծնողներից մեկը կարող է դիմել ՀՀ ոստիկանություն մինչև 16 տարեկան երեխային անձնագիր տրամադրելու հարցով՝ երեխային Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս տանելու նպատակով և դրա համար մյուս ծնողի համաձայնությունը պարտադիր նախապայման չէ: Իսկ եթե դատական կամ նոտարական կարգով*

վավերացված համաձայնությամբ արդեն իսկ որոշված է երեխայի բնակության վայրը՝ որպես ծնողներից մեկի բնակության վայր, ապա այդ ծնողն իրավունք ունի գրավոր ձևով արգելելու, որ մյուս ծնողին ՀՀ ոստիկանությունը երեխայի անձնագիր տրամադրի, հետևաբար և չթույլատրվի այդ ծնողին դուրս հանելու երեխային Հայաստանի Հանրապետության տարածքից:

Այսինքն, քանի դեռ ՀՀ ոստիկանությունում առկա չէ ծնողի գրավոր անհամաձայնությունը երեխային անձնագիր տրամադրելու մասին, այն տրամադրելու իրավասությունն ունեցող համապատասխան մարմինը իրավունք ունի ծնողներից միայն մեկի դիմումի հիման վրա տրամադրելու անձնագիր:

(...) սույն գործում առկա չէ որևէ ապացույց այն մասին, որ Արամ Պետրոսյանը գրավոր անհամաձայնություն է ներկայացրել իր անչափահաս երեխային Հայաստանի Հանրապետությունից դուրս հանելու վերաբերյալ, բացի այդ առկա չէ ապացույց այն մասին, որ մինչ 2019 թվականի դեկտեմբերը առկա է եղել դատական կամ նոտարական կարգով վավերացված համաձայնությամբ երեխայի բնակության վայրը՝ որպես ծնողներից մեկի բնակության վայր սահմանելու մասին որոշում, կամ դատական ակտ:

(...) 20.02.2020թ. ԱՄՆ պետդեպարտամենտի Հյուպատոսական գործերի բյուրոյի Օտարերկրյա քաղաքացիներին ծառայությունների մատուցման գրասենյակի Երեխաների հարցերի գրասենյակի կողմից էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկված գրության համաձայն՝ խնդրել են տրամադրել փաստաթուղթ, որով հիմնավորվում է ենթադրյալ ապօրինի տեղափոխման/պահման ժամանակ խնամակալության իրավունքների մասով պահանջը: Համաձայն ՀՀ ԱՆ ՔԳԱԿ գործակալության 11.03.2020թ. թիվ 26.21 5794-2020 գրության՝ ուղղված ԱՄՆ պետդեպարտամենտի Երեխաների հարցերի գրասենյակին՝ 2020թ. փետրվարի 17-ի թիվ 26.2/344-2020 գրությանը կից, ի թիվս այլնի, ուղարկվել է Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կողմից տրված՝ կենսապայմանների վերաբերյալ եզրակացությունը:

(...) Դատարանը փաստում է, որ վերոնշյալ եզրակացությունը չէր կարող համարվել իրավական հիմք խնամակալության իրավունքների խախտման փաստը հավաստելու համար, որպիսին կարող էր լինել դատական կամ նոտարական կարգով վավերացված համաձայնությամբ երեխայի բնակության վայրը՝ որպես ծնողներից մեկի բնակության վայր սահմանելու մասին որոշումը, կամ դատական ակտը, իսկ նշյալ ժամանակահատվածում Դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտ առկա չի եղել:

(...) սույն գործում առկա 23.01.2020թ. Ալ Մաթնի արագացված ընթացակարգով գործերի դատավորին ուղղված դիմումի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ դիմումը ներկայացնելու օրվա դրությամբ Արամ Պետրոսյանը գտնվել է Լիբանանում, սակայն Հայաստան վերադարձել է առանց երեխայի(...)

(...) ՀՀ ԱՆ ՔԿԱԳ գործակալությունը մինչև դիմումը Կենտրոնական մարմին փոխանցելը պարտավոր էր անհապաղ պարզել՝ արդյոք ՀՀ օրենսդրության համաձայն երեխայի տեղափոխմամբ խախտվել են Արամ Պետրոսյանի խնամակալության իրավունքները և արդյոք տեղափոխման կամ պահելու պահին միասնական կամ անհատական կերպով այդ իրավունքներն արդյունավետորեն իրականացվել են կամ կիրականացվեին, եթե չլիներ տեղափոխումը կամ պահելը, որպիսիք պարզելու պարագայում ՀՀ ԱՆ ՔԿԱԳ գործակալությունը կունենար բավարար հիմք դիմումը Կենտրոնական մարմնին

փոխանցելու համար: Այնինչ, Դատարանը գտնում է, որ Պատասխանողի կողմից չեն պահպանվել վերը նշված իրավական ակտերի պահանջները և առանց համապատասխան մեխանիզմների կիրառման և վերը նշված փաստերը և վերադարձման հիմքերի առկայությունը պարզելու իրականացվել են Կոնվենցիայով սահմանված ընթացակարգեր (...)»:

Վերաքննիչ դատարանը 09.02.2024 թվականի որոշմամբ Գործալակության վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ Դատարանի 28.10.2021 թվականի վճիռն ամբողջությամբ բեկանվել և վարչական գործի վարույթն ամբողջովին կարճվել է այն պատճառաբանությամբ, որ *«(...) Լիլիթ Խաչատրյանը (ներկայացուցիչ Ելենա Կասպարովա), դիմելով Դատարան, խնդրել է ոչ իրավաչափ ճանաչել Գործակալության՝ Արամ Պետրոսյանի 17.02.2020 թ. դիմումի հիման վրա կատարված գործողությունները՝ դրանք դիտարկելով որպես ոչ իրավաչափ վարչարարության դրսևորում:*

Գործակալության պետին հասցեագրված 17.02.2020 թ. դիմումով Արամ Պետրոսյանը խնդրել է «(...) ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Կոնվենցիայի շրջանակներում իր դիմումը քննարկելու և ԱՄՆ իրավասու մարմիններին դիմելու համար» (...):

(...) տվյալ դեպքում Գործակալությունն իր բնույթով վարչարարություն հանդիսացող գործունեություն չի իրականացրել, այսինքն՝ իր առարկայական իրավասության տիրույթում իրականացվող գործադիրկարգադրիչ գործունեության ընթացքում չի իրացրել իր որևէ հանրային իշխանական լիազորություն՝ դրանով իսկ իրավահարաբերության մյուս մասնակցի համար առաջացնելով որոշակի փաստական հետևանքներ: Այլ կերպ ասած՝ Գործակալությունը, ստանալով Արամ Պետրոսյանի դիմումը և, ըստ դրա՝ հիմքեր ունենալով հավատալու, որ վերջինիս երեխան գտնվում է այլ Պայմանավորվող պետությունում (տվյալ դեպքում՝ ԱՄՆ), անմիջականորեն և առանց ձգձգումների այն փոխանցել է տվյալ Պայմանավորվող պետության Կենտրոնական մարմնին՝ դրանով իսկ հարցի վերջնական լուծումը տեղափոխելով այն պետության իրավազորության տիրույթ, որտեղ ենթադրաբար անօրինական կերպով տեղափոխվել և (կամ) պահվում է երեխան՝ դրանով իսկ քննարկվող կոնվենցիոն կառուցակարգի շրջանակներում իրացնելով իր գործառույթները (...):

Հաշվի առնելով որ տվյալ դեպքում հայցվորի կողմից մատնանշված գործողությունները, չեն հանդիսանում վարչարարության դրսևորում՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ սույն վարչական գործի վարույթը ենթակա է կարճման և առկա են անհրաժեշտ և բավարար հիմքեր Վերաքննիչ դատարանի՝ Օրենսգրքի 145-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված լիազորությունը կիրառելու և Օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի հիմքով գործի վարույթը կարճելու համար (...)»:

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Սույն գործի փաստերից հետևում է, որ Գործակալության պետին հասցեագրված 17.02.2020 թվականի դիմումով Արամ Պետրոսյանը խնդրել է ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Հաագայի կոնվենցիայի շրջանակներում իր դիմումը քննարկելու և ԱՄՆ իրավասու մարմիններին դիմելու համար:

ԱՄՆ պետդեպարտամենտի երեխաների հարցերի գրասենյակին հասցեագրված 17.02.2020 թվականի թիվ 26.2/3442-2020 գրությամբ Գործակալության պետը

խնդրել է Հաագայի կոնվենցիայի համաձայն դիտարկել երեխային Հայաստանի Հանրապետություն վերադարձնելու հարցը:

ԱՄՆ պետդեպարտամենտի երեխաների հարցերի գրասենյակի 19.02.2020 թվականի գրությամբ հաստատվել է Արամ Պետրոսյանի Հաագայի կոնվենցիայի համաձայն ներկայացված՝ երեխայի վերադարձի մասին դիմումի ստացումը:

Գործակալության պետի 08.04.2021 թվականի թիվ 26.2/8651 գրությամբ հայտնվել է, որ ԱՄՆ Կալիֆոռնիա նահանգի դատարանի որոշմամբ երեխան վերադարձվել է իր սովորական բնակության վայր՝ Հայաստանի Հանրապետություն: Նշված փաստի հիման վրա Հաագայի կոնվենցիայի շրջանակներում գործի քննարկումը համարվել է ավարտված:

Գործակալության պետի 10.06.2021 թվականի թիվ 26.2/16451-2021 գրությամբ հայտնվել է, որ Հաագայի կոնվենցիայի շրջանակներում քննվող գործը փակվել է ԱՄՆ կենտրոնական մարմնի կողմից՝ ԱՄՆ համապատասխան դատարանի՝ երեխային Հայաստանի Հանրապետություն վերադարձնելու որոշմամբ: Նույն պահին երեխան գտնվել է Հայաստանի Հանրապետությունում:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը փաստում է, որ, սույն վարչական գործի նյութերի համաձայն՝ Գործակալության պետին հասցեագրված դիմումով Արամ Պետրոսյանն ակնկալել է, որ կենտրոնական մարմնի կողմից ձեռնարկվեն անհրաժեշտ միջոցներ Հաագայի կոնվենցիայի շրջանակներում իր դիմումը քննարկելու և ԱՄՆ իրավասու մարմիններին դիմելու համար՝ ենթադրելով, որ Գործակալության կողմից կատարվելիք գործողությունների արդյունքում Արամ Պետրոսյանի և Լիլիթ Խաչատրյանի անչափահաս որդին՝ Գևորգ Պետրոսյանը ԱՄՆ-ից կտեղափոխվի Հայաստանի Հանրապետություն:

Գործակալության կողմից իրականացված գործողություններով Արամ Պետրոսյանի կողմից ակնկալվող արդյունքն ստացվել է, և Գևորգ Պետրոսյանը ԱՄՆ-ից տեղափոխվել է Հայաստանի Հանրապետություն:

Հետազոտելով գործում առկա նյութերը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դրանցով հիմնավորվում է, որ Արամ Պետրոսյանը համապատասխան դիմումով դիմել է Գործալակությանը, Գործակալության կողմից կատարվել են Հաագայի կոնվենցիայով սահմանված լիազորություններ, որոնց արդյունքում ԱՄՆ կենտրոնական մարմինը ապահովել է Գևորգ Պետրոսյանին Հայաստանի Հանրապետություն վերադարձնելու հարցի լուծումը: Այսինքն, Գործակալության կողմից՝ որպես հանրային իշխանություն կրող սուբյեկտի, կատարվել են արտաքին ներգործություն ունեցող այնպիսի գործողություններ, որոնց արդյունքում բարելավվել է Արամ Պետրոսյանի փաստացի դրությունը՝ վերացվել են վերջինիս՝ Գևորգ Պետրոսյանի նկատմամբ խնամակալության իրավունքի իրացման համար խոչընդոտ հանդիսացող հանգամանքները:

Նշվածը Վճռաբեկ դատարանին հիմք է տալիս արձանագրելու, որ Գործակալության կողմից կատարված և սույն գործով վեճի առարկա հանդիսացող գործողությունները հանդիսանում են վարչական մարմնի կողմից կատարված և կատարմամբ իրենց սպառած գործողություններ, ուստի դրանց առնչությամբ իրավական վեճը ենթակա է ՀՀ վարչական դատավարության կարգով քննության:

Վերոնշյալ պատճառաբանությամբ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատավարական իրավունքի նորմերի խախտում, ինչը հանգեցրել է գործի սխալ լուծման:

Ամբողջ վերոգրյալի հիման վրա՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել ՀՀ Սահմանադրության 61-րդ, 63-րդ հոդվածների և Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքերի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-151-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ տրված դատական սխալի արդյունքում գործի վարույթը կարճվել է ընթացակարգային հիմնավորումներով և սույն դատական վեճը չի ենթարկվել ըստ էության քննության, ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո գործին ըստ էության լուծում տալու համար՝ սույն գործն անհրաժեշտ է ուղարկել ՀՀ վերաքննիչ վարչական դատարան՝ ողջ ծավալով նոր քննության:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով այն, որ վճռաբեկ բողոքը ենթակա է մասնակի բավարարման, իսկ գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, գտնում է, որ այդ հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակի: Բեկանել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 09.02.2024 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վերաքննիչ վարչական դատարան նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

Նախագահող _____ ***Հ. ԲԵԴԵՎՅԱՆ***

Զեկուցող _____ ***Ա. ԹՈՎՄԱՍՅԱՆ***

_____ ***Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ***

_____ ***Ք. ՄԿՈՅԱՆ***